



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հոկտեմբերի 2014 թվականի N Ս- 1010 -Ա
քաղ. Երևան

«ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՍՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 27-ի N 07/80-2/15730-14 և սեպտեմբերի 25-ի N 06/5-1/15463-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N ԱՄ/22.2/9893-14 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից՝ անհատ բարերար Ռոզա Գասպարյանի կողմից աջակցության նպատակով «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (անվասայլակներ, դեղորայք և բժշկական սարքավորումներ, պարագաներ ու նյութեր, 2 տեղ, 370 կգ ընդհանուր քաշով, 700 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Շիրակի» Տ/Ս) ներմուծման ծրագիրը:

2. «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ